ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«02» մայիսի 2013 թ. N 47-Հ/Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 64-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով, <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմում ստեղծել հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):
2. Հաստատել Հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն Հավելվածի:
3. Հանձնաժողովին՝ երկամսյա ժամկետում մշակել և սահմանված կարգով հաստատման ներկայացնել Հանձնաժողովի աշխատակարգը:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հուլիսի 14-ի <<Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմում հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով ստեղծելու մասին>> N 64-Ա/1 հրամանը:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության աշխատանքի
և սոցիալական հարցերի նախարարի
2013 թվականի ապրիլի 2-ի N 47-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Թադևոս Ավետիսյան	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) աշխատանքի և զբաղվածության վարչության պետ

Անդամներ՝

Արթուր Եղիազարյան	Աշխատակազմի ռազմավարական ծրագրերի և մոնիթորինգի վարչության վերահսկողության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ
Ռոզա Մկրտչյան	Աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչության կենսաթոշակային քաղաքականության բաժնի պետ
Վանիկ Բաբաջանյան	Աշխատակազմի ժողովրդագրության բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Աստղիկ Ավագյան	Աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության նպաստների բաժնի գլխավոր մասնագետ